կարենանք բերել իր խստամբեր կեանքին և խստապահանջ նկարագիրին վրայ յենած իր գործելու եղանակը և պահանջկոտութիւնները, և աններող ու խիստ ընթացքը հանդէպ բոլոր տկար հոգիներու, տատանողներու, երկմիտներու և անհաստատ ու թուլամորթ կենցաղի մը սայթաքումներուն մէջ ինկողներուն։

ԳԼ.

ԻՐ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

Վարդապետական ճշմարիտ պաշտօնը ուսուցանելն է և Գրիգոր Կեսարացի որ կը սիրէր կոչուիլ յաւէտ վարդապետ, «վինչեւ ժամ ծերութեանն յուսուցանելոյ եւ խրատելոյ ոչ դադարեր»։

Ան մարզուած Սրապիոն Ուռհայեցիի Ամիթի վարժարանին մէջ, ինքն ալ իր կարգին աշակերտներ հասուցած է անշուշտ հրահանգելով և ուսուցանելով անոնց։

Դժբախտաբար իր փոթորկալից կեանքը թոյլ չէ տուած իրեն հիմնելու կանոնաւոր դպրոց մը, որուն համար քաղաքական պայմաններն ալ չափազանց անբնպաստ էին այդ ժամանակամիջոցին (1595-1636) որ ինքն գործեց։